ԼՈՒՐԵՐ ԹԵՄԵՐԻՑ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

Մայիսի 27-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետի 1972 թվականի սեպտեմբերի 3 թվակիր կոնդակի հրահանգի համաձայն, լոնդոնահայ գաղութը եկեղեցական ու ազգային հանդիսությամբ տոնախմբում է հիշատակը Սարդարապատի ճակատամարտի նահատակների՝ հերոսամարտի 55-րդ տարեդարձի առիթով:

Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցում, օրվա հանդիսության առիթով, պատարագել է հոգեվոր հովիվ և Մայր Աթոռի միաբան տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ, օրվա տոնի մասին, ոգեշունչ քարոզ է խոսել՝ «Սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի...» (Մովսես Խորենացի) բնաբանով:

Ս. պատարագի հոգեպարար երգեցողությունը կատարել է ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը՝ Ե. Միսիրլյանի ղեկավարությամբ: Ս. պատարագի երգեցողությանն իր մասնակցությունն է բերել Լոնդոնում գտնվող հայրենաբնակ երգչուհի օրիորդ Մարի Պոզապալյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվել է Սարդարապատի հերոս նահատակների հիշատակին նվիրված մասնավոր հոգեհանգստյան արարողություն:

Այնուհետև օրվա հանդիսության առիթով ս. Սարգիս եկեղեցուն կից Նվարդ Կյուլպենկյան սրահում տեղի է ունեցել ճաշկերույթ-հանդես, որին իրենց մասնակցությունն են բերել շուրջ երկու հարյուր հրավիրյալներ: Ճաշկերույթի ժամանակ տ. Ներսես ծ. վարդապետը, Ս. Գապարաճյանը, Հ. Փալամուտյանը, Ա. Կյուզելյանը, Կ. Փափազյանը հանդես են եկել «ոգևորիչ և սրտաբուխ» ճառերով:

Ճաշկերույթ-հանդեսի ժամանակ գործադրության է դրվել նաև գեղարվեստական մի գեղեցիկ ծրագիր: Ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը Ե. Միսիրլյանի ղեկավարությամբ կատարել է «Սարդարապատի քաջեր» և «Էրեբունի» խմբերգերը: Զ. Շամլյանը դաշնամուրի վրա նվագում է Ա. Խաչատրյանի «Սուսերով պար»-ը: Ա. Կյուզելյանն արտասանում է Հ. Շիրազի «Իմ սուրբ հայրենիք»-ը, իսկ երգչուհի Մ. Պոզապալ-

յանը կատարում է «Կռունկ», «Քելե, քելե» և «Կիլիկիա» երգերը:

Հանդիսության ավարտին տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը շնորհակալություն է հայտնում հանդեսի բոլոր մասնակիցներին, մանավանդ ԱՄՆ-ից, Մերձավոր Արևելքից հյուրաբար ժամանած ներկաներին: Ապա հայր սուրբը գնահատանքի և օրհնության ջերմ խոսք է ուղղում այն տիկնանց, որոնք սիրահոժար կերպով պատրաստել են հանդիսության մատաղը:

Սարդարապատի 55-ամյակին նվիրված այս խրախուսիչ հանդիսությունը ավարտվում է հոգևոր հովվի՝ հերոսների հիշատակին արտասանած «Հոգւոց»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ԼՈՒՐԵՐ ՀՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՑ

Հունահայերի թեմական խորհրդի՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին ուղարկած «Հաղորդագրություն»-ից տեղեկանում ենք, որ վերջերս Աթենքում, Փերիսթերիի ս. Աստվածածին եկեղեցում, տեղի է ունեցել հունահայ համայնքի թեմական (ս. Գրիգոր Լուսավորիչ միություն) ընտրությունները:

Այս կապակցությամբ և մասնավոր հրավերով Աթենք է ժամանել Ավստրիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Ընտրությունների հաջորդ օրը տ. Մեսրոպ ծ. վարդապետի նախագահությամբ և թեմի հոգևոր հովիվ տ. Հակոբ քհն. Ռյուստեմյանի ներկայությամբ գումարվել է նորընտիր թեմականի առաջին նիստը, ուր և կազմվել է դիվանը՝ հետևյալ անձնակազմով.

Ստեփան Ֆեսճյան՝ ատենապետ.

Սարգիս Խաչատուրյան՝ փոխ-ատենապետ.

Հայկ Ղազարյան՝ ատենադպիր.

Լևոն Քյոսեյան՝ գանձապահ.

Կարպիս Գալայճյան՝ խորհրդական անդամ.

Հակոբ Մերճանյան՝ խորհրդական-անդամ.

Վարդգես Թադեոսյան՝ խորհրդական-անդամ:

Հանուն Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորում ենք հունահայոց թեմի նորընտիր թեմական խորհրդին և մաղթում նրան եկեղեցաշեն գործունեություն՝ ի պայծառություն թեմի եկեղեցական-ազգային և մշակութային կյանքի: